

ԳՐՔԱՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ՝ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Posted on January 10, 2023 by Keghart



Category: [Opinions](#)



Նառա Դանիելյան, Երևան, 5 Հունվար 2023

Թեեւ օրէ օր կ'աւելնայ Էլեկտրոնային «գիրք»երու ընթերցողներուն թիւը, այդուհանդերձ, աւանդական գիրքը կը մնայ տիրական թէ՛ տեղական եւ թէ՛ համաշխարհային տարողութիւններով: Ի գուր չէ, որ գիրքը «մշտական հաճոյքներու տուփ» կոչած են: Ընթերցողները կրնան նոյնպէս «ճաշակել» Սերոբ Ստեփանեանի [Save the Orphan Books-ը](#), որ տեղադրուած է «Գեղարդ»ի այս թողարկման մէջ: **Խմբ.**

Գրադարանները հարստացնելու միջոցներից են գրքերի փոխանակման ծրագրերը: Դրանք նպաստում են տարբեր կառույցների միջև կապերի ստեղծմանն ու ձևավորմանը, ինչպէս նաև ֆոնդերի համալրմանը առանց գումարներ ծախսելու:

Հայաստանի Պատմության Թանգարանը (ՀՊԹ) նման գործակցության փորձառություն ունի հայաստանյան տարբեր գիտակրթական հաստատությունների հետ: Տարեվերջին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանն ու Հայաստանի պատմության թանգարանը գրքեր փոխանակեցին:



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի շենքը

Մատենադարանի փոխանակման գրքերի ցանկում են եկեղեցիների ալբոմներ, ձեռագրացուցակներ, հուշագրքեր, ընդհանրապես արվեստին, մասնավորաբար կիրառական արվեստին վերաբերող հրատարակություններ, պատմաբանասիրական և կրոնական բնույթի աշխատություններ: Իսկ Պատմության թանգարանի գրքերի

ցանկում են պատկերագիրք-հուշատետրեր (*կատալոգ-ալբոմներ*), արվեստի, մշակույթի տարբեր ճյուղերին վերաբերող հետաքրքիր հետազոտություններ, ամսագրեր, պարբերականներ:

Երկու մշակութային կառույցների միջև փոխանակված գրքերը ավելի՛ հարստացնելու են նրանց գրադարաններից օգտվող ընթերցողների հոգևոր և հայագիտական բնույթի գիտելիքները:

ՀՊԹ գիտական գծով փոխտնօրեն Նժդեհ Երանյանը մեզ հետ զրույցի ընթացքում մասնավորապես նշեց. «Հայաստանի Պատմության Թանգարանը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանը համագործակցության սկզբնական փորձ ունեն և, բնականաբար, գործակցությունը տարբեր ոլորտներում շարունակվելու է: Հայաստանի Պատմության Թանգարանն ունի հրատարակության մեծ փորձ. դեռ խորհրդային տարիներից սկսած սեփական հրատարակություններ ունի, որոնց մի մասը պարտադիր փոխանցվում է փոխանակելի *ֆոնդ*: Դա նշանակում է, որ այդ *ֆոնդի*ց պետք է գործընկեր թանգարանների և գրադարանների հետ պարբերաբար փոխանակում իրականացվի: Այս առումով, մեր զույգ կառույցների աշխատանքը աննախադեպ չէր. սա պարբերաբար իրականացվող գործընթաց է: Աննախադեպ էր գրքերի քանակով և դրանց բովանդակության առումով: Նույն բանը իրականացվում է նաև Մայր Աթոռի մատենադարանում. իրենք ևս ունեն սեփական հրատարակություններ և իրենք ևս իրենց մասնագիտական գրականությունը պարբերաբար փոխանակում են գործընկերների հետ»:

Գրքափոխակցությունը բնականաբար կարող է դառնալ գրականության փոխանակման պայմանավորվածություն: Երկու կառույցների գրադարաններում բացակայող գրքերի փոխանակումը շատ օգտակար և շատ արժեքավոր քայլ է:



Չնայած այսօրվա համացանցի պայմաններում թվում է, թե ամեն ինչ հասանելի է, սակայն միևնույնն է՝ գիրքը շարունակում է մնալ գիտելիքի և լրատվության ամենակարևոր աղբյուրը:

Պարոն Երանյանը հավելեց, որ սա փոխգործակցության միակ դեպքը չէ. այն եղել է նախապես, և լինելու է շարունակական թե՛ գրադարանների համալրման մասով, թե՛ մասնագիտական քննարկումների առումով: Նա շեշտեց համատեղ քննարկման կարևորությունը այն խնդիրների, որոնք ընդհանուր են իրենց երկու, ինչպես նաև համանման կենտրոնների համար: Հարկավոր է, որ այդ հարցերը քննարկվեն համակողմանի ու համապարփակ և դրանց հնարավոր լուծումները մեկ ընդհանուր դաշտ բերվեն՝ ընդհանուր օգուտի հեռանկարով:

There are no comments yet.